ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ք. Երևան «16» հուլիսի, 2019թ.

Արմեն Մանուկյանը (անձնագիր AM0802840, տրված 011-ի կողմից 11.07.2012թ.-ին)՝ այսուհետ նաև Հեղինակ, մի կողմից և «Մեյսիս Ինֆորմեյշն Սիսթեմս» ՍՊԸ-ն՝ այսուհետ նաև Կիրառող, մյուս կողմից, միասին՝ Կողմեր, իսկ առանձին նաև՝ Կողմ, կնքեցին սույն պայմանագիրը՝ այսուհետ Պայմանագիր, հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1 Հեղինակը Կիրառողին Պայմանագրով որոշված պայմաններով և հատուցմամբ օտարում է **Armlex - Դատարան հարկադիր կատարող ծառայություն ինտեգրացիոն հարթակը**՝ այսուհետ նաև Ծրագրային ապահովում, իսկ Կիրառողն ընդունում է Ծրագրային ապահովման էքսլուզիվ օգտագործման իրավունքը և Հեղինակին վճարում դրա համար՝ Պայմանագրով որոշված գինը:

1.2 Ծրագրային ապահովման նկատմամբ հեղինակային բոլոր իրավունքները պատկանում են Հեղինակին՝ ըստ «ՀԱՅՀԵՂԻՆԱԿ» ՀԿ-ի կողմից 23.03.2020թ.-ին տրված ¹-07/121 տեղեկանքի, հեղինակի գույքային էքսլուզիվ իրավունքները Պայմանագրով փոխանցվում են Կիրառողին:

1.3 Կիրառողն իրավունք ունի առանց լրացուցիչ վճարի իր այլ ծրագրերի գործարկման կամ Ծրագրային ապահովման գործարկման համար ՀՀ ԱՆ Հարկադիր կատարման ծառայության պահանջների բավարարման նպատակով հարմարեցնել Ծրագրային ապահովումը կամ կատարել այլ փոփոխություններ դրա մեջ, այդ թվում նաև՝ տեղայնացնել Ծրագրային ապահովումը: Կիրառողն իրավունք ունի Ծրագրային ապահովումը կամ դրա մասը կամ դրա վերարտադրությունը կամ Ծրագրային ապահովման նկատմամբ իրավունք փոխանցել որևէ կերպ երրորդ անձի:

2. Ծրագրային ապահովման գինը և վճարման կարգը

2.1 Ծրագրային ապահովման գինը կազմում է 10,000,000 (տաս միլիոն) ՀՀ դրամ, որը ներառում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերը:

2.2 Ծրագրային ապահովման գինը վճարվում է Հեղինակի՝ Պայմանագրում նշված բանկային հաշվեհամարին:

3. Գործողության տարածքը

3.1 Կիրառողն իրավունք ունի Ծրագրային ապահովումն օգտագործել բացառապես Հայաստանի Հանրապետության տարածքում:

4. Վեճերի լուծման կարգը

4.1 Պայմանագրի կապակցությամբ առաջացած վեճերի լուծումը, բացառելով պետական դատարանների ենթակայությունը, հանձնվում է Հայաստանի Հանրապետության առևտրաարդյունաբերական պալատին (ՀՀ ԱԱՊ) կից մշտապես գործող արբիտրաժային դատարանին՝ համաձայն վերջինիս կանոնակարգի՝ մեկ արբիտրի կազմով, դատավարության լեզու՝ հայերեն, արբիտրաժի վայրը՝ քաղաք Երևան: Վեճը լուծվում է Հայաստանի Հանրապետության նյութական իրավունքի նորմերի համաձայն:

5. Կողմերի տվյալները

ՀԵՂԻՆԱԿ	ԿԻՐԱՌՈՂ
Արմեն Մանուկյան	Մեյսիս Ինֆորմեյշն Սիսթեմս ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Աբովյան 26բ շենք, բնակարան 20 Բանկ՝ Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան Բանկային հաշվեհամար՝ 21700 001-249515-001	Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Դավիթ Անհաղթի 23/22 ՀՎՀՀ՝ 01555207 Բանկ՝ Ինեկո Բանկ ՓԲԸ Բանկային հաշվեհամար՝ 2051722046171001